ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2015 թ.

This program was funded by a grant from the United States Department of State. The opinions, findings, and conclusions stated herein are those of the authors and do not necessarily reflect those of the United States Department of State.

The statements and analysis contained herein are the work conducted in the frames of the American Bar Association's Rule of Law Initiative. The statements and analysis expressed are solely those of the authors, and have not been approved by the House of Delegates or the Board of Governors of the American Bar Association and do not represent the position or policy of the American Bar Association. Furthermore, nothing in this report is to be considered rendering legal advice for specific cases. This study is made possible by the generous support of the American people through the United States International Narcotics and Law Enforcement Bureau ("INL"). The contents are the responsibility of the American Bar Association's Rule of Law Initiative and do not necessarily reflect the views of INL or the United States Government.

Սույնը ծրագիրը ֆինանսավորվել է Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ ներկայացված տեսակետները, եզրակացությունները և եզրահանգումները արտահայտում են հեղինակների կարծիքը և պարտադիր չէ, որ արտահայտեն Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտի տեսակետը:

Սույն դիտարկումները և վերլուծությունները հանդիսանում են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության «Իրավունքի գերակայության նախաձեռնություն» ծրագրի սահմաններում իրականացված աշխատանք: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Ամերիկյան իրավաբանների ընկերակցության պատվիրակների պալատի և կառավարիչների խորհրդի կողմից, ուստի և՝ չեն ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության դիրքորոշումներն ու տեսակետները: Ի լրումն, սույն զեկույցի որևէ մաս չպե՛տք է ընկալել որպես առանձին գործերի առնչությամբ տրամադրվող իրավական խորհրդատվություն: Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի առատաձեռն օժանդակության շնորհիվ՝ ԱՄՆ Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի միջոցով: Նյութի բովանդակության համար պատասխանատու է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Իրավունքի գերակայության նախաձեռնություն ծրագիրը: Նյութի բովանդակությունը կարող է չհամընկնել ԱՄՆ Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

Բովանդակություն

Բովանդակություն 3

Ներածություն 5

1.Իրավաբանական կլինիկայի ստեղծումը և գործունեությունը 6

2. Իրավաբանական կլինիկայի տեսական փուլը 7

3. Իրավաբանական կլինիկայի գործնական փուլ 9

3.1 Իրավաբանական խորհրդատվությունների տրամադրման կարգը 10

3.2.Իրավախորհրդատուի վարքագծի կանոնները 11

4. *Մարդու իրավունքների ոլորտում առավել հաճախ խախտվող իրավունքները կարգավորող օրենսդրության կատալոգ* 12

Մարդու և քաղաքացու իրավունքներ. 12

Հավասարության իրավունք 16

Կյանքի իրավունք 17

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք 18

Խոշտանգումներից անմարդկային կամ նվաստացնող 21

վերաբերմունքից զերծ մնալու իրավունք 21

Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք 22

Բնակարանի անձեռնմխելիության իրավունք 22

Խղճի, մտքի և կրոնի ազատություն 24

Արտահայտվելու ազատություն, ... 24

ներառյալ տեղեկատվության ազատություն 24

Շրջակա միջավայրի պաշտպանության իրավունք 25

5. Իրավունքների պաշտպանության մեխանիզմներ 34

Ոստիկանություն 34

Դատարաններ 35

Մարդու իրավունքների պաշտպան 35

ՀՀ Փաստաբանների պալատ 36

Մարդու իրավունքների եվրոպական դատարան 37

Իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ 37

6. Ձևաթղթեր 38

Տեղեկատվություն ստանալու հարցման ձև 39

Հայցադիմումի սահմանված ձևաթուղթ 41

Հայցադիմումի պատասխանի ձևաթուղթ 43

Դիմումի ձև 45

Հանցագործության մասին հաղորդման ձև 47

Դիմում-բողոքի ձև 48

Ներածություն

Իրավաբանական կլինիկայի վերաբերյալ ձեռնարկը մշակվել է՝ նպատակ ունենալով նպաստել իրավաբանական կլինիկաների ստեղծմանը, դրանց գործունեության վերաբերյալ նախնական գիտելիքների և այն կառավարելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն: Ցանկացած իրավաբանական կլինիկա ստեղծող կազմակերպության կամ անձի համար այն կարող է որպես ուղեցույց ծառայել: Ձեռնարկը մասնագիտական կարողությունները զարգացնելու հնարավորություն կտա ցանկացած սկսնակ իրավաբանի:

Ձեռնարկը բացի իրավաբանական կլինիկայի վերաբերյալ տեղեկությունները, իր մեջ պարունակում է նաև անհրաժեշ իրավական գրացուցակ (կատալոգ)՝ մեկնաբանություններով, ինչպես նաև իրավունքերի պաշտպանության մեխանիզմներ՝ կառույցներն իրենց լիազորություններով:

Իրավաբանությամբ զբաղվելու ցանկություն ունեցող իրավաբանները ձեռնարկում կգտնեն անհրաժեշտ ձևաթղթեր՝ աշխատանքը հեշտացնելու կամ մասնագիտական կողմորոշման համար:

Իրավաբանական կլինիկա ծրագիրը իրականացնողի և ֆինանսավորողի միջև ծրագրային գործողությունները իրականացնելու, հաջողությունների, մարտահրավերների ու արդյունքերի վերաբերյալ կապը պահպանվում է անընդհատ, սակայն յուրաքանչյուր ամիս, այդ ամսվա ընթացքում իրականացված գործողությունների վերաբերյալ սահմանված ձևին համապատասխան ներկայացվուն են հաշվետվություններ:

1.Իրավաբանական կլինիկայի ստեղծումը և գործունեությունը

Իրավաբանական կլինիկաները ստեղծվում են իրավաբանական ֆակուլտետում սովորող ուսանողների համար՝ հիմնականում ուսումնական հաստատություններում և հանդիսանում են պարտադիր ուսումնական ծրագրի մաս:

Իրավաբանական կլինիկա ստեղծելը նպատակ ունի տեսական գիտելիքներ ստացող իրավաբաններին նաև պրակտիկ գիտելիքների ուղղությամբ վերապատրաստել՝ խորհրդատվություն տրամադրելու, իրավաբանական փաստաթղթեր կազմելու միջոցով: Իրավաբանական կլինիկա ստեղծելու կարևորագույն պատճառներից է նաև ուսանողների շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքներով իրազեկելը՝ իրավապաշտպան գործունեության մեջ ընդգրկելը, ինչպես նաև հետագայում աշխատանքի անցնելու վերաբերյալ կողմնորոշելը, աշխատանքային փորձի հնարավորությունը:

Վանաձորի իրավաբանական կլինիկան ստեղծվել է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից՝ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA ROLI) ֆինանսավորմամբ: Ծրագիրը ՀՔԱ Վանաձորի գրասենյակ հասարակական կազմակերպության կողմից իրականացվում է արդեն երեք տարի՝ սկսած 2014թ. սեպտեմբերի 1-ից:

Կազմակերպության կողմից իրականացված առաջին երկու իրավաբանական կլինիկաներին ընդհանուր առմամբ մասնակցել են իրավաբանական ֆակուլտետի 30 ուսանողներ: Ծրագրի արդյունքում մասնակից իրավաբաններից մի քանիսը աշխատանք են գտել իրենց մասնագիտությամբ, երտասարդ իրավաբաններից մեկը՝ Սուսաննա Դավթյանը, աշխատանքի ընդունվեց ՀՔԱ Վանաձորի գրասենյակում օրենսդրական վերլուծությունների և նախաձեռնությունների բաժնում, որպես իրավական վերլուծությունների մասնագետ, Անժելա Նազարյանը ծրագրի ավարտից հետո աշխատանքի անցավ Պոպուլեքս փաստաբանական գրասենյակում, որպես փաստաբանի օգնական, Վրույր Այվազյանը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունում, որպես իրավաբան-խորհրդատու, բոլորովին վերջերս Անուշ Փիլոյանը աշխատանքի է ընդունվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում, որպես գործավար: Իրավաբանական կլինիկայի գրեթե բոլոր մասնակիցները ընդգրկված են կազմակերպության դիտորդների ցուցակներում և անհրաժեշտության դեպքում կարճաժամկետ մասնակցում են իրականացվող ծրագրերին, ակտիվ

մասնակցություն են ունեցել մարդու իրավունքների վերաբերյալ իրականացված ծրագրերին:

Վանաձորի իրավաբանական կլինիկան ստեղծվել է ուսումնական հաստատությունից դուրս՝ իրավաբանական ֆակուլտետում սովորող ուսանողների և շրջանավարտների համար, որը նպատակ ունի բարելավել իրավաբանական կրթություն ստացող, շրջանավարտ իրավաբանների գիտելիքները մարդու իրավունքների և իրավունքների պաշտպանության բնագավառում՝ քրեական իրավունքի շրջանակներում:

Իրավաբանական կլինիկան երկու մասից բաղկացած ուսումնական ծրագիր է, որի առաջին փուլում ծրագրի մասնակից իրավաբանների համար կազմակերպվում են դասընթացներ՝ մարդու իրավունքներ թեմայով՝ հիմնականում քրեական ուղղվածության: Ուսուցման փուլը ավարտելուց հետո, ստացած տեսական գիտելիքները ամրապնդվում են գործնական փուլում, որն իրենից ներկայացնում է խորհրդատվության տրամադրում բնակչության անվճարունակ խավին:

Ծրագրի հաջող ավարտին մասնակից իրավաբանները ստանում են համապատասխան վկայականներ: Իրավաբանական կլինիկայում սովորող ուսանողները հետագայում հեշտ են աշխատանքի ընդունվում, քանի որ կլինիկայի շրջանակներում ստացած գիտելիքների և պրակտիկայի մեծ պաշարը մասնագիտական գործունեության մեջ կայանալու մեծ հնարավորություն է:

2. Իրավաբանական կլինիկայի տեսական փուլը

Իրավաբանական կլինիկա ծրագիր սկսելիս առաջին հերթին հայտարարություն է տարածվում ուսանողներին ներգրավելու համար: Հայտարարությունը տարածվում կազմակերպության էլեկտրոնային էջի միջոցով, փակցվում է տվյալ քաղաքի ուսումնական հաստատություններում, ծրագրի վերաբերյալ հայտարարվում է նաև իրավաբանական ֆակուլտետի համապատասխան լսարաններում: Ծրագրին մասնակցելու ցանկություն ունեցող իրավաբան ուսանողները և շրջանավարտները էլեկտրոնային կարգով կամ անձամբ ներկայացնում են ինքնակենսագրական և հետաքրքրվածության նամակ: Սահմանվում է որոշակի ժամանակ հայտեր ներկայացնելու համար: Ժամանակը լրանալուց հետո նշանակվում է մասնակիցների հետ հարցազրույցի օրը, մի քանի րոպե տարբերությամբ հարցազրույց է անցկացվում, հարցեր են տրվում

հիմնականում քրեական իրավունքի և քրեական դատավարության, միջազգային տարբեր կոնվենցիաների ու ծրագրին մասնակցության ցանկության վերաբերյալ: Հարցազրույցը անցկացնելուց հետո ընտրվում են առավել ակտիվ և իրավունքերի վերաբերյալ բանիմաց մասնակիցները:

Մասնակիցներից հայտերը ընդունվելու ընթացքում ընտրվում են դասընթացավարները, ովքեր պետք է պարտադիր պրակտիկ գործունեություն ծավալող փաստաբաններ լինեն: Դասընթացավարների ընտրությունից հետո կազմվում է համապատասխան թեմաների ցանկը, որոնց շրջանակներում մասնակից ուսանողները անցնում են վերապատրաստում: Թեմաներն ըստ մասնագիտական ուղղվածության բաժանվում են դասընթացների միջև:

Դասընթացավարները նախապես որոշված դասընթացի թեմաների վերաբերյալ սովորաբար պատրաստում են անհրաժեշտ պրեզենտացիաներ և թեմայի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն, որը դասընթացի օրը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում է մասնակիցներին: Դասընթացները անցկացնելու համար հատուկ մշակված կարգ չկա, դասընթացները իրականացվում են բանավոր կարգով, սկզբում ներկայացվում է թեմայի վերաբերյալ դասընթացավարի կողմից պատրաստված նյութը, տվյալ թեմայի վերաբերյալ ներպետական և եվրոպական օրենսդրությունը, բացերն ու օրենսդրական խնդիրները, ինչպես նաև պրակտիկ խնդիրները:

Նախատեսված նյութը ներկայացնելուց հետո դասընթացավարները պատասխանում են մասնակիցների կողմից առաջադրված հարցերին, քննարկումների միջոցով էլ ավելի արդյունավետ դարձնելով տրամադրված նյութը: Քրեական իրավունքի և դատավարության վերաբերյալ ուսուցում անցկացնելու անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ ուսումնական հաստատություններում քրեական իրավունքն ու դատավարությունը մարդու իրավունքների տեսանկյունից դասընթացներ կամ չեն կազմակերպվում, կամ եթե կազմակերպվում են, ապա շատ քիչ ժամաքանակ է նախատեսվում, որն այնքան էլ արդյունավետ և բավարար չէ իրավաբանների համար: Իրավաբանական կլինիկան հատկապես իրավապաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպության ներսում կազմակերպելու իմաստը կայանում է նրանում, որ այստեղ մեծ հնարավորություն կա մեծ փորձ ձեռք բերելու, պրակտիկ գիտելիքներ ստանալու:

3. Իրավաբանական կլինիկայի գործնական փուլ

Իրավաբանական կլինիկայի ուսանողների համար կազմակերպված դասընթացների ավարտից հետո մասնակից իրավաբան-ուսանողների տեսական գիտելիքները ամրապնդելու համար կազմակերպվում է տեսական փուլ, որի ընթացքում մասնակիցները բաժանվում են 2 մասի և նախօրոք ընտրված պրակտիկայի ղեկավար փաստաբան (իրավաբանների) մոտ կազմակերպվում են գործնական աշխատանքները: Գործնական աշխատանքի ողջ ժամանակահատվածում մասնակից իրավաբան-ուսանողները ծանոթանում են իրավաբանական խորհրդատվության տրամադրման կարգին, անձամբ տրամադրում են իրավախորհրդատվություն պրակտիկայի ղեկավարի մոտ իրավաբանական աջակցություն ստանալու համար դիմած անձանց: Իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար կարող է դիմել ցանկացած անձ, ով ունի իրավաբանական խորհրդատվության կարիք, սակայն իրավաբանական խորհրդատվության համար հիմնականում դիմում են սոցիալապես անապահով, տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող անձինք: Պրակտիկայի ղեկավարի հանձնարարությամբ պատրաստում են անհրաժեշտ իրավաբանական փաստաթղթեր՝ խորհրդատվության արդյունքում բացահայտված խնդիրների լուծման ուղղությամբ: Պրակտիկայի ղեկավարի հանձնարարությամբ մասնակիցները ուսումնասիրում են իրավաբանական խորհրդատվության համար դիմած քաղաքացիների ներկայացրած խնդիրը և փաստաթղթերը՝ անձամբ առաջարկում խնդրի լուծման տարբերակներ: Իրավախորհրդատվության համար դիմած բոլոր քաղաքացիներին տրամադրվում է բանավոր իրավաբանական խորհրդատվություն, սակայն որոշ դեպքերում իրավաբան-ուսանողները և պրատիկայի ղեկավարը խորհրդատվությունը իրականացնում են գրավոր ընթացակարգով: Պրակտիկ հմտությունների ձեռք բերման գործընթացքում կարևոր տեղ է զբաղեցնում գործի նյութերի փաստաթղթավորումը: Գործնական աշխատանքերի կազմակերպման առաջին օրերին մասնակից իրավաբաններին բացատրվում է գործի նյութերի փաստաթղթավորման կարգը, հերթականությունը: Խորհրդատվության բնույթից ելնելով, անհրաժեշտ փաստաթուղթ պատրաստելուց առաջ մասնակից իրավաբաններին բացատրվում է տվյալ փաստաթղթի կառուցվածքը, պատրաստման կարգը, ինչպես նաև նշվում է հիմնական այն փաստերը, որոնց պարտադիր է ուշադրություն դարձնել: Հանձնարարված փաստաթուղթը նախնական տարբերակով մասնակից իրավաբան-ուսանողի կողմից քննարկվում է պրակտիկայի ղեկավարի հետ, եթե թերություններ կամ բացթողումներ են լինում, շտկվում են: Խորհրդատվության տրամադրման ընթացքում ցանկալի է, որ մասնակից իրավաբան-ուսանողները իրավաբանական փաստաթղթեր կազմելուց

բացի մասնակցություն ունենան պրակտիկայի ղեկավարի գործերով դատական նիստերին՝ դատավարական պրոցեսին տիրապետելու նպատակով:

3.1 Իրավաբանական խորհրդատվությունների տրամադրման կարգը

Իրավաբանաան խերհրդատվության տրամադրումը, իրավունքերի պաշտպանության եղանակ է, որի համար անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական հմտություններ և կարողություններ: Իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տրամադրված խորհրդատվությունից է կախված իրավախորհրդատուի կողմից բարձրացված խնդրի լուծման՝ խախտված իրավունքի և գործի ճակատագիրը:

Շատ կարևոր է, որ իրավաբանական խորհրդատվությունը տրամադրվի առանձին սենյակում՝ գաղտնիության սկզբունքից ելնելով:Քաղաքացու կողմից իրավաբանի նկատմամբ վստահության և անկաշկանդ խնդիրը ներկայացնելու տեսանկյունից դա կարոր է: Նստելու առաջարկելուց հետո՝ ցանկալի է, որպեսզի իրավախրհրդատվության համար դիմած քաղաքացին և իրավաբանը նստած լինեն դեմ-դիմաց, հավասար պայմաններում: Մինչև քաղաքացու կողմից խնդրի ներկայացմանը անցնելը, իրավախորհրդատուն ներկայանում է, նշելով իր անուն ազգանունը, պաշտոնը և նշում է, որ տվյալ կազմակերպությունում ինքն է իրավասու իրավաբանական խորհրդատվություն տրամադրել քաղաքացիներին: Իրավախորհրդատուն ուշադրությամբ և որ ամենակարևորն է, համբերատարությամբ լսում է իրավախորհրդատվություն ստանալու նպատակով իրեն դիմած քաղաքացու խնդիրը: Եթե լրացուցիչ հարցերի միջոցով պարզված հանգամանքներից բացի նաև այլ փաստեր են անհրաժեշտ ճշտել, ապա իրավախորհրդատուն քաղաքացուն է ուղղում հստակ ձևակերպված հարցեր: Խնդրի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ստանալուց հետո իրավախորհրդատուն սկսում է ներկայացնել քաղաքացու կողմից բարձրացված հարցի լուծման վերաբերյալ համապատասխան իրավական ճանապարհը: Եթե քաղաքացու կողմից բարձրացված խնդիրը բարդ է և լուծում առաջարկելու համար լրացուցիչ ուսումնասիրության կարիք է զգացվում, ապա իրավախորհրդատուն պետք է քաղաքացուն հայտնի, որ խնդրի ճիշտ լուծման համար ուսումնասիրություն կատարելու կարիք կա, ուստի ինքը այդ հարցի վերաբերյալ կարող է համապատասխան լուծումներ ներկայացնել որոշակի ժամանակ անց (ժամեր, օրեր, շաբաթ և այլն): Իրավախորհրդատվության ավարտին իրավաբանը հետագա կապը ապահովելու, ինչպես նաև իրավախորհրդատվության տվյալների

պահպանության համար քաղաքացուց պետք է վերցնի վերջինիս կոնտակտային տվյալները: Հետագայում, քաղաքացու գործի շրջանակներում պատրաստված գրությունները, դիմումները քաղաքացուն է հանձնվում հեռախոսազանգի միջոցով հրավիրելու միջոցով: Քաղաքացուն պարտադիր բացատրվում է պատրաստված իրավաբանական փաստաթուղթը ուղարկելու և համապատասխան պատասխան ստանալուց հետո հետադարձ կապը պահպանելու կարգը:

Պարտադիր է իմանալ.

Իրավախորհրդատվություն տրամադրող իրավախորհրդատուն պարտավոր է պահպանել քաղաքացու կողմից իրեն ներկայացված խնդրի և տվյալների գաղտնիությունը:
Ցանկացած իրավախորհրդատվություն տրամադրելիս, իրավախորհրդատուն պարտավոր է ձեռքի տակ ունենալ իրավական տեղեկատվական համակարգը:

3.2.Իրավախորհրդատուի վարքագծի կանոնները

Իրավաբանական խորհրդատվություն տրամադրող իրավաբանի, փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Իրավաբանի կոչումը պետք է մեկնաբանվի իրավունքի արդյունավետ պաշտպանության, ինչպես նաև այդ իրավունքի պաշտպանության ուղղությամբ ձեռնարկված գործողությունների տեսանկյունից:

Իրավախորհրդատվություն տրամադրող անձի էթիկա ասելով, հասկանում ենք նախ մարդու ներքին համոզումունքը իրավունքի պաշտպանության ուղղությամբ ձեռնարկված գործողություններում, այնուհետև քաղաքացիների և պետական մարմինների հետ աշխատելիս համապատասխան էթիկայի նորմերի պահպանումը:

Իրավախորհրդատվություն տրամադրելիս իրավախորհրդատուն պետք է՝

1. պահպանել գաղտնիությունը և կոնֆիդենցիալությունը,
2. վստահություն ներշնչել իրավախորհրդատվության համար դիմած քաղաքացուն,
3. ունենալ իրավաբանին վայել կեցվածք և իրավաբանորեն խոսելու հմտություն,

4. պատշաճ հարգանք դրսևորել խորհրդատվության համար իրեն դիմած անձի նկատմամբ,
5. բարոյականության նորմերի պահպանության տեսանկյունից զերծ մնալ որոշակի էմոցիաներ արտահայտելուց՝ հուզվել, ծիծաղել, ծաղրել, հեգնել, վեճի բռնվել քաղաքացու հետ,
6. կոռեկտ և մտածված լինել արտահայտություններում, անկախ նրանից, թե ում կամ ինչի մասին է խոսվում,
7. ատելություն, հակակրանք, որոշակի բացասական վերաբերմունք չներշնչել իրավախորհրդատվության համար դիմած անձի մեջ՝ հակառակ կողմի կամ պետական մարմինների նկատմամբ,
8. իրավախորհրդատուն չի կարող միևնույն գործով 2 կողմերին էլ իրավախորհրդատվություն տրամադրել՝ շահերի բախումից խուսափելու նպատակով,
9. այն դեպքում, երբ խորհրդատուն իմանում է, որ խորհրդատվություն ստանալու համար իրեն դիմած քաղաքացին փաստաբան ունի, անհրաժեշտ է զերծ մնալ խորհրդատվություն տրամադրելուց,
10. սեփական կարծիքը, քաղաքական հայացքները և անձնական մտածելակերպը չպարտադրել իրավախորհրդատվության համար դիմած անձին:

4. *Մարդու իրավունքների ոլորտում առավել հաճախ խախտվող իրավունքները կարգավորող օրենսդրության կատալոգ*

Մարդու և քաղաքացու իրավունքներ.

Լեհաստանի Հելսինկյան Կոմիտեի համահիմնադիր, իրավապաշտպան Մարեկ Նովիցկին պնդում է, որ Ժողովրդավարական հասարակության մեջ մեծամասնության իշխանության սահմանները որոշվում են մարդու իրավունքներով և ազատություններով:[1]

Մարդու իրավունքների կարևորագույն հասկացություններից է **իրավունքի պետություն (իրավական պետություն) հասկացությունը:** Իրավական է այն պետությունը, որտեղ գործում են առանձին անհատների և իշխանության համար նախատեսված հստակ, կայուն և բոլորին հայտնի խաղի կանոններ: Իրավական պետությունում քաղաքացին շատ մեծ հավանականությամբ կարող է կանխատեսել, թե իշխանություններն ինչպես կարձագանքեն նրա այս կամ այն վարքագծին, քանի որ նման պետությունում գերակայում է ոչ թե պետական պաշտոնյաների կամ իշխանավորների կամայականությունը, այլ՝ հստակ և թափանցիկ իրավունքը:

[1] What are Human Rights, Marek Nowicki, http://www.hfhr.pl/wp-content/uploads/2011/06/marek_nowicki_what_are_human-rights.pdf

Պետք է փաստել, որ իրավական պետությունը միշտ չէ, որ ժողովրդավարական է, իսկ ժողովրդավարական պետությունը՝ իրավական:

Մարդու իրավունքներն ու ազատությունները դրսևորվում են միմիայն **պետության հետ անհատի ունեցած փոխհարաբերություններում:** Իրավունքների նման դրսևորումը կոչվում է «ուղղահայաց»: Ընտանեկան կյանքից, սիրուց, ընկերությունից և բարիդրացիական հարաբերություններից բխում են մի շարք իրավունքներ և պարտականություններ, որոնք, սակայն, մարդու իրավունքների շրջանակներում ընդգրկված չեն:

Մարդու իրավունքները ոչ թե **կոլեկտիվ (խմբային)** են, այլ՝ **անհատական**, և դրանց սուբյեկտը հանդիսանում է առանձին անհատը: Այսպիսով, մարդու իրավունքները ներառում են ոչ թե ազգային փոքրամասնությունների իրավունքները, որոնք դիտարկվում են քաղաքականության շրջանակներում (օրինակ, նման խմբային իրավունք է ինքնավարության իրավունքը), այլ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները, ինչպես նաև՝ ոչ թե հաշմանդամների խմբի իրավունքները, այլ՝ այդ խմբի յուրաքանչյուր առանձին անհատի իրավունքները:

«Մարդու իրավունքները» բաժանվում են երկու հիմնական խմբի՝ **նյութական և ընթացակարգային**: Նյութական իրավունքները մարդուն վերապահված կոնկրետ իրավունքներն ու ազատություններն են, այն է՝ խոսքի ազատությունը, խղճի ազատությունը, դավանանքի ազատությունը, բնակության վայրի ընտրության ազատությունը, կրթության իրավունքը և այլն: Ընթացակարգային իրավունքներն իրենցից ներկայացնում են անհատին հասանելի գործելու եղանակները և դրանց առնչվող ինստիտուտները, որոնք նրան հնարավորություն են տալիս հետամուտ լինել իշխանությունների կողմից իր ազատությունների պահպանմանը և իրավունքների իրացմանը:

Երբեմն նշված տարբերակումը հստակ չէ. օրինակ՝ դատաքննության իրավունքը որոշ իրավիճակներում կարող է համարվել նյութական (երբ դիմում ենք դատարան՝ որպես մեկ այլ անձի հետ մեր վեճը լուծող ատյան), իսկ որոշ դեպքերում՝ ընթացակարգային (երբ բողոք ենք ներկայացնում դատարան մեր իրավունքները խախտած որևէ հաստատության դեմ):

Նյութական իրավունքները ներառում են՝ **իրավունքներ և ազատություններ**: **Իրավունքը** (դրական իրավունք) հանդիսանում է իշխանավորների՝ յուրաքանչյուր անհատի օգտին ուղղված լուրջ միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը:

Ազատությունը (բացասական իրավունք) ենթադրում է անհատների կյանքի որոշ ոլորտներին միջամտելու հարցում իշխանությունների վրա դրված արգելքը: Խոսքի ազատությունը, կրոնի ազատությունը և այլ ազատություններ պետական իշխանություններին արգելում են միջամտել մարդկային գործունեության նշված ոլորտներին: Այսինքն, եթե անձն ունի որևէ իրավունք, ապա իշխանությունները պարտավոր են ինչ-որ բան անել այդ իրավունքի ապահովման համար, այսինքն՝ կատարել ակտիվ գործողություն, իսկ եթե անձին վերապահված է որևէ ազատություն, ապա պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ որևէ գործողությունից:

Որոշ իրավունքներ **անօտարելի** են: Նման իրավունքները մարդուն վերապահված այնպիսի իրավունքներն են, որոնցից նա չի կարող հրաժարվել: Որևէ անձի կողմից ստորագրված փաստաթուղթն առ այն, որ նա հրաժարվում է իր անձի ազատությունից և որևէ մեկի մոտ ստրկության է անցնում, չի կարող ունենալ որևէ իրավական հետևանք և ի սկզբանե իմաստազուրկ է: Սակայն մենք կարող ենք արդյունավետորեն տնօրինել մեր գույքը և սահմանափակել սեփականության մեր իրավունքը, քանի որ սեփականության իրավունքն անօտարելի իրավունք չի հանդիսանում:

Քանի որ մարդու իրավունքների և ազատությունների հետ կապված բոլոր հարցերը վերաբերում են անհատի և իշխանությունների փոխհարաբերություններին, ապա հարկավոր է ընդգծել, որ նման փոխհարաբերությունների բնույթի նկատմամբ գոյություն ունի երեք սկզբունքորեն տարբեր մոտեցում.

Առաջին մոտեցման համաձայն՝ առաջնային է համարվում իշխանությունը, որի բարեհաճությամբ և բարությամբ մարդկանց հատկացվում են որոշ իրավունքներ: Այսպիսով, մարդիկ ունեն այնքան իրավունքներ, որքան նրանց կտրամադրեն իշխանությունները: Այս մոտեցումն ամրագրված է բոլոր կոմունիստական երկրների սահմանադրություններում, ինչպես նաև եվրոպական որոշ պետությունների՝ տասնիններորդ դարի սահմանադրություններում:

Երկրորդ մոտեցման հիմքում ընկած է հասարակական պայմանագրի մոդելը. այս պարագայում իշխանությունները պայմանագիր են կնքում որպես անհատների ամբողջություն (այլ ոչ թե որպես մարքսիստական հասարակություն, որը, հանդիսանալով «նոր որակի հասարակություն», կարող է ունենալ իր սեփական նպատակները՝ առանց հաշվի առնելու հասարակության առանձին անդամների կամքը և շահերը) ընկալվող ժողովրդի հետ: Պետության հպատակ

քաղաքացիները համաձայնվում են կատարել որոշակի պարտականություններ հօգուտ իշխանավորների (օրինակ՝ վճարել հարկեր), իսկ իշխանություններն իրենց հերթին պարտավորվում են որոշակի քայլեր ձեռնարկել հօգուտ ժողովրդի (իրացնել նրանց իրավունքները) և զերծ մնալ նրանց կյանքի որոշ ոլորտներին միջամտելուց (այսինքն՝ ճանաչել նրանց ազատությունները): Նման պայմանագիրը, որն այս կամ այն չափով շահավետ է յուրաքանչյուր կողմի համար և լրացված է պետական ապարատի կառուցվածքի նկարագրությամբ, հաճախ կոչվում է «սահմանադրություն»:

Երրորդ մոտեցումը բնորոշ է ամերիկյան մտածելակերպին: Մարդ արարածին հատկանշական բնական իրավունքներն ու ազատություններն ունեցող անձինք իրենց կյանքը բարելավելու և ավելի հարմարավետ դարձնելու համար որոշում են պետություն կազմել և իշխանություն նշանակել: Պետության գործունեությունն ապահովելու նպատակով նրանք ինքնակամ սահմանափակում են որոշ իրավունքներ և ազատություններ՝ թողնելով դրանք պետության հայեցողությանը, օրինակ՝ սահմանափակում են իրենց սեփականության իրավունքը՝ համաձայնվելով վճարել հարկեր կամ սահմանափակում են իրենց ազատությունը՝ պարտավորվելով ըստ անհրաժեշտության ծառայել բանակում:

Այս մոտեցումը հիմնովին տարբերվում է առաջինից: Եթե առաջին դեպքում ժողովուրդն օգտվում է այնքան իրավունքներից, որքան նրան տրամադրում են իշխանությունները, ապա երրորդ դեպքում ժողովուրդն է իրավունքներ վերապահում իշխանություններին: Մտածելակերպի նման տարբերություններն ունեն լուրջ գործնական հետևանքներ: Իրավական նորմ ընտրելու և այն համապատասխանաբար կիրառելու անհրաժեշտության պարագայում առաջնորդվելով անհատի և իշխանությունների փոխհարաբերությունների դիտարկման նկատմամբ առաջին և երրորդ մոտեցումներով՝ կստանանք տարբեր լուծումներ, ինչը նշանակում է, որ անգամ նույն դրույթների պարագայում հասարակական իրականությունը կարող է ձևավորվել տարբեր կերպ: Երրորդ մոտեցումը, որի համաձայն՝ **իշխանություններին թույլատրվում է միայն այն, ինչ թույլատրելի է օրենքով, իսկ ժողովրդին՝ այն ամենը, ինչն օրենքով արգելված չէ**, հանդիսանում է մարդու իրավունքների հայեցակարգի հիմքերից մեկը: Այդուհանդերձ, հարկավոր է հիշել, որ մենք դիտարկում ենք միայն «անհատի և իշխանությունների» միջև հաստատվող փոխհարաբերությունների խնդիրը, և որ այն պնդումը, որի համաձայն անհատին թույլատրվում է օրենքով չարգելված ամեն ինչ, սահմանափակում է միայն մեր կյանքի տարբեր ոլորտներին պետության հարկադրական միջամտության հնարավորությունը՝ առանց որևէ կերպ նվազեցնելու հարազատների, հարևանների կամ պարզապես այլ մարդկանց նկատմամբ մեր ունեցած բարոյական պարտավորությունները:

Մարդու իրավունքների հայեցակարգի հիմնական հասկացությունն է անօտարելի **մարդկային արժանապատվությունը:** Մարդկային արժանապատվությունը կապված է մարդ լինելու բուն էության հետ՝ բխելով տվյալ էակի՝ մարդ արարած լինելու փաստից, այսինքն՝ մարդկային արժանապատվությունը բնորոշ է թե՛ մանուկին, ով իր կյանքում դեռևս չի գործել ո՛չ լավ, ո՛չ էլ վատ արարք, և թե՛ ամենավատ հանցագործին:

Այսպիսով, մարդու իրավունքները չեն երաշխավորում, որ մենք կլինենք սիրված, երջանիկ և հաջողակ, ո՛չ էլ արդարացիություն կամ նվազագույն բարեկեցություն, այլ միայն մեզ պաշտպանում են նվաստացումից, մեր արժանապատվության նկատմամբ ոտնձգություններից այն էլ միայն մեկ, սակայն հնարավոր ամենահզոր խախտողից՝ պետական իշխանություններից, որոնք ժողովրդավարության պայմաններում արտահայտում են մեծամասնության կամքը:
Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Մարդու իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատություններն են[2].

Հավասարության իրավունք

Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ Սահմանադրության 14.1 կետը սահմանում է հավասարության դրույթը, այս դրույթը պետք է անվերապահորեն գործի պետական բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից: **Ոչ ոք չպետք է ենթարկվի խտրականության կամ**

[2] ՀՀ Սահմանադրություն, http://www.arlis.am/documentview.aspx?docID=1

տարբերակված մոտեցման: ՀՀ Սահմանադրության վերը նշված դրույթին լրացնում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածով ամրագրված խտրականության արգելքը:
Չնայած սահմանադրական և միջազգային երաշխիքներին՝ Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի ընդունել Խտրականությունն արգելող առանձին օրենք, որն իրավական մեխանիզմներ կստեղծեր խտրականության կանխարգելման և խտրականությունից տուժածների պաշտպանության համար: Հայաստանի Հանրապետությունում խտրականության և անհանդուրժողականության դեպքերը բազմաթիվ են հատկապես տարբեր կրոնական կազմակերպություններին հարող անձանց և սեռական փոքրամասնությունների նկատմամբ: Այս անհանդուրժողականությունը ոչ միայն չի կանխվում, այլ նույնիսկ խրախուսվում է պետական մարմինների կողմից՝ խախտելով ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային նորմերով սահմանված այլ ազատություններ և իրավունքներ ևս:

Կյանքի իրավունք
Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի: Կյանքի իրավունքը բացարձակ իրավունք չէ, այս իրավունքը, չնայած իր կարևորության բացառիկ դեպքերում կարող է սահմանափակվել՝ անհրաժեշտ պաշտպանություն և պատերազմական վիճակներում և այլն: Կյանքի իրավունքի ապահովման գործընթացում պետությունը ունի 2 պարտավորություն **նեգատիվ** և **պոզիտիվ**:

Պետության նեգատիվ պարտավորությունը սահմանում է, որ պետությունն՝ ի դեմս պաշտոնատար անձանց, պետք է ձեռնպահ մնա այնպիսի գործողություններ կատարելուց, որի արդյունքում կարող է խախտվել անձի կյանքի իրավունքը:

Պետության պոզիտիվ պարտավորությունը ենթադրում է, որ պաշտոնատար անձինք և պետական մարմինները պետք է որոշակի պոզիտիվ քայլեր ձեռնարկեն անձանց կյանքը և առողջությունը պաշտպանելու ուղղությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե ում կողմից է եղել անձի կյանքի կամ առողջության նկատմամբ ոտնձգություն: Պոզիտիվ պարտավորության շրջանակների մեջ է մտնում նաև անձի մահվան դեպքում հանրային մեղադրանքի ուժով քրեական գործ հարուցելու և քննություն կատարելու պահանջը:

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

Մարդու իրավունքների համակարգում առաջնային կարևորություն և նշանակություն ունեն անձնական իրավունքները, այդ թվում՝ անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը: **Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք:** Մարդուն կարելի է ազատությունից զրկել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը հստակորեն նախատեսում է այն կոնկրետ պայմանները, որոնց առկայության դեպքում է միայն հնարավոր սահմանափակել անձի՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը (այն է՝ անձն իրավասու դատարանի կողմից դատապարտվել է ազատազրկման՝ հանցագործություն կատարելու համար, անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը): Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում քիչ չեն դեպքերը, երբ անձը զրկվում է ազատության իրավունքից՝ հիշյալ հոդվածի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, հաճախ անձինք ոստիկանություն են տեղափոխվում առանց օրինական հիմքերի և քրեադատավարական նորմերի բազմաթիվ խախտումներով: Անձին բերման ենթարկելը կամ ձերբակալելը ենթադրում է նրա իրավունքների և ազատությունների սահմանափակում:

Իր ազատությունների սահմանափակման դեպքում անձն իրավունք ունի՝

1) սահմանափակման պահից իմանալու իր ազատության սահմանափակման պատճառները, հիմքերը, իր ազատությունը սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը.
2) ստանալու իրավաբանական օգնություն.
3) բացատրություններ տալու փաստաբանի ներկայությամբ կամ հրաժարվելու բացատրություններ տալուց՝ լռելու իրավունք
4) ծանոթանալու իր իրավունքների ու ազատությունների սահմանափակմանն անմիջականորեն առնչվող փաստաթղթերին կամ նյութերին.
5) պահանջելու, որպեսզի ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում իր գտնվելու վայրի մասին տեղեկացվի իր կողմից ընտրված անձին.
6) անհրաժեշտության դեպքում ստանալու բժշկական օգնություն.
7) պահանջելու օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել իր ազատության սահմանափակման կապակցությամբ իր կամ ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու, ինչպես նաև իր տիրապետման տակ գտնվող՝ առանց հսկողության մնացած գույքը պահպանելու նպատակով.

8) ծանոթանալու իր ազատության սահմանափակման օրինականությունը և հիմնավորվածությունը բողոքարկելու կարգին, ոստիկանության գործողություններն ու որոշումները բողոքարկելու վերադասության կարգով կամ դատախազին կամ դատարան.
9) ոստիկանություն բերվելիս՝ իր պահանջով ստանալու իրավունքների մասին իր համար հասկանալի լեզվով գրավոր ծանուցում.
10) պահանջելու, որպեսզի իրեն թույլ տան օգտվելու իր իրավունքներից՝ դրա մասին գրավոր դիմելով իր ազատությունը սահմանափակած ոստիկանության ծառայողին:
Ազատությունից զրկելը (բերման ենթարկելուց հետո ձերբակալումը) չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի: Նշված ժամկետում, եթե համապատասխան հիմքեր չկան անձին մեղադրանք առաջադրելու և խափանման միջոց ընտրելու, անձը անհապաղ պետք է ազատ արձակվի արգելանքից:
Մեղադրանք առաջադրելուց հետո, պետք է լուծվի խափանման միջոց կիրառելու հարցը, ազատության սահմանափակման հետ կապված խափանման միջոց՝ կալանավորման դեպքում վարույթն իրականացնող մարմնի միջնորդության հիման վրա դատարանը պետք է կայացնի պատճառաբանված և հիմնավորված որոշում: Անձը կարող է կալանավորվել միայն դատարանի որոշման հիման վրա:
Ազատությունից զրկելու հիմքերի մասին խոսելիս անհրաեշտ է անդրադառնալ նաև կալանավորմանը, որպես խափանման միջոց:

Խափանման միջոց կիրառելու հիմքերը

Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

2. Կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը

մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները:

3. Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝

1) վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը.

2) կասկածյալի կամ մեղադրյալի անձը.

3) տարիքը և առողջական վիճակը.

4) սեռը.

5) զբաղմունքի տեսակը.

6) ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը.

7) գույքային դրությունը.

8) բնակության մշտական վայրի առկայությունը.

9) այլ էական հանգամանքներ:

Խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում:

Կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմի միջնորդությամբ:

Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը հաշվվում է ձերբակալելիս անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից, իսկ եթե նա չի ձերբակալվել, ապա այդ խափանման միջոցն ընտրելու մասին դատարանի որոշումը կատարելու պահից:

2. Կալանքի տակ պահելու ժամկետի մեջ հաշվակցվում է այն ժամանակը, երբ անձը գտնվել է՝

1) արգելանքի տակ՝ նրան ձերբակալելիս և կալանավորելիս.

2) բժշկական հաստատությունում՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, հիվանդանոցային փորձաքննություն, ինչպես նաև քրեական գործով վարույթի ընթացքում հայտնաբերված ժամանակավոր հիվանդագին հոգեկան

խանգարումից բուժում անցնելու ընթացքում, այդ թվում՝ կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելիս:

3. Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող լինել 2 ամսից ավելի, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Ընդ որում, գումարվում են կալանքի տակ և բժշկական հաստատությունում անձի գտնվելու, մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետի մեջ հաշվակցվող բոլոր ժամկետները: Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, կամ կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացվում է:

4. Քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը, հաշվի առնելով գործի առանձնակի բարդությունը, դատարանի կողմից կարող է երկարացվել մինչև 6 ամիս, իսկ բացառիկ դեպքերում, երբ անձը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ՝ մինչև 12 ամիս: ….:

Խոշտանգումներից անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի:

Ի տարբերություն կյանքի իրավունքի, **խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը բացարձակ իրավունք է**, այն ոչ մի դեպքում, ոչ մի պարագայում կամ հիմնավորմամբ չի կարող խախտվել կամ սահմանափակվել: Խոշտանգումներից, դաժան և նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը իր մեջ ներառում է մի քանի ասպեկտներ: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայից բխում է, որ արարքը որպես խոշտանգում որակելու համար պարտադիր է հետևյալ 3 տարրերի առկայությունը.

- ☑ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տանջանք պատճառելը.
- ☑ դիտավորյալ ցավ պատճառելը.
- ☑ կոնկրետ նպատակ հետապնդելը:

Այս առումով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում խոշտանգման սահմանումը չի համապատասխանում միջազգային նորմերին, ինչը նշանակում է, որ խոշտանգումներից զերծ մնալու բացարձակ իրավունքն արդյունավետորեն չի պաշտպանվում: Պետության վերահսկողության ներքո գտնվող գրեթե բոլոր հաստատություններում՝ ոստիկանություն, զինված ուժեր, քրեակատարողական հիմնարկներ և այլն, արձանագրվում են խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի մեծաթիվ դեպքեր, որոնք սակայն հիմնականում չեն բացահայտվում և մեղավորները պատասխանատվության չեն ենթարկվում: Խոշտանգումների բացահայտմանը մեծապես խոչընդոտում է այն, որ շատ դեպքերում տուժածները վախենում են բարձրաձայնել և իրենց իրավունքի պաշտպանության նպատակով գործողություններ ձեռնարկել, մինչդեռ նմանատիպ խախտումների հանրայնացումը կարող է զսպող ուժ հանդիսանալ խախտումն իրականացնող մարմնի նկատմամբ և խթանել գործի օբյեկտիվ քննությունը:

Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Այդ իրավունքը ենթադրում է, որ **առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով**: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:

Բնակարանի անձեռնմխելիության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան՝

բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ: Այլ դեպքերում բնակարանում կատարվող խուզարկությունը համարվում է խախտում, որը զուգորդվում է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման հետ:

Ի դեպ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք նախադեպային որոշումների տրամաբանությամբ բնակարան հասկացությունը իր մեջ ներառում է նաև այն վայրը որտեղ անձը առավելապես գտնվում է՝ աշխատասենյակ, ավտոմեքենա, արհեստանոց և այլն: Ապօրինի խուզարկությունը հաճախ կիրառվում է որպես քաղաքացու նկատմամբ ճնշում գործադրելու միջոց և այս առումով կարևոր է համապատասխան ընթացակարգերի մասին պատշաճ իրազեկվածությունը:[3]

Բնակարանում խուզարկություն կարող է կատարվել, երբ վարույթն իրականացնող մարմինը, բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ անձի մոտ հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր են պահվում, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար:

Խուզարկությանը մասնակիցներն են.

1. Խուզարկությունը կատարվում է ընթերակաների մասնակցությամբ:
2.Անհրաժեշտության դեպքում խուզարկությանը մասնակցում են թարգմանիչ և մասնագետ:
3. Խուզարկություն կատարելիս պետք է ապահովվի այն անձի և նրա ընտանիքի չափահաս անդամի ներկայությունը, որոնց բնակարանում կատարվում է խուզարկությունը:
4. Անձն իրավունք ունի խուզարկության կատարման ժամանակ հրավիրել իր փաստաբանին, ով իրավունք ունի մասնակցելու վարույթն իրականացնող մարմնի կողմից իրականացվող բոլոր գործողություններին, հայտարարություններ անել, որոնք պետք է ներառվեն խուզարկության արձանագրության մեջ:
Խուզարկություն կատարելուց առաջ քննիչը պարտավոր է անձին, որի մոտ կատարվում է խուզարկություն, ծանոթացնել որոշմանը: Այդ մասին նրանից վերցվում է ստորագրություն:
Խուզարկության ավարտին վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կազմել համապատասխան արձանագրություն, որտեղ նշվում է քննչական

[3] Ոստիկան - քաղաքացի հարաբերություններ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, https://www.youtube.com/watch?v=jcukDe1chys

գործողության կատարման տեղը, ժամանակը, հանգամանքները, արդյոք կամովին են հանձնվել որոնվող առարկաները և անձինք, խուզարկություն կատարող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ընթերակաների անունները, ազգանունները և հասցեները, ինչպես նաև քննչական գործողության այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները և դատավարական կարգավիճակը, արձանագրությունում ներառվում են նաև մասնակիցների դիտողությունները:
Խուզարկության արձանագրության պատճենը պարտադիր, ստորագրությամբ հանձնվում է այն անձին, ում մոտ կատարվել է խուզարկությունը, կամ նրա ընտանիքի չափահաս անդամներին:

Խղճի, մտքի և կրոնի ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մտքի, խղճի և կրոնի ազատության մասին դրույթ իր մեջ պարունակում է նաև այդ իրավունքը հարգելու պարտադիր պայման:

Այնուհանդերձ, Հայաստանը միայն 2014 թվականին է դադարեցրել կրոնական համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից խուսափող անձանց քրեական հետապնդումը, իսկ տարբեր կրոնական կազմակերպություններին հարող անձանց նկատմամբ խտրականությունը շարունակվում է աշխատանքային, կրթական և այլ հասարակական հարաբերություններում:

Արտահայտվելու ազատություն,
ներառյալ տեղեկատվության ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ և կարգավորվում է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները անձանց տեղեկատվություն ստանալու հարցումներին պարտավոր են պատասխանել այն ստանալու պահից 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության, որը կարող է տրամադրվել 30 օրյա ժամկետում:

Քաղաքացիներին տեղեկատվության տրամադրումը կարող է մերժվել, եթե պահանջվող տեղեկատվությունը պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք, խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ և այլն:

Շրջակա միջավայրի պաշտպանության իրավունք

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

Առողջ շրջակա միջավայր ապահովելու նպատակով պետությունը պետք է իրականացնի ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն:

Վերջին տարիների ընթացքում տեղի ունեցող բազմաթիվ բողոքի ակցիաներ հանքերի շահագործման (Թեղուտ), հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման (Թռչկան) վերաբերյալ կայացված որոշումների դեմ վկայում են սակայն, որ բնական պաշարների, ջրային ռեսուրսների, կանաչ տարածքների

(Մաշտոցի պուրակ) սահմանափակման վերաբերյալ որոշումները իրավասու մարմինների կողմից կայացվում են առանց տվյալ համայնքի բնակիչների մասնակցության և կարիքների գնահատման, ինչն արդարացի ընդվզման պատճառ է դառնում:

Վերջին տարիներին շեշտակի աճող անոմալ ծնունդների և գենետիկ հիվանդությունների թիվն էլ իր հերթին վկայում է, որ պետության կողմից պատշաճ վերահսկողություն չի իրականացվում հանքերի շահագործման ընթացքում բնապահպանական անվտանգության ապահովման նկատմամբ:

Անմեղության կանխավարկած

Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

Պաշտպան ունենակու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք սույն օրենսգրքով նախատեսված կարգով իրավունք ունի ստանալ իրավաբանական օգնություն:

2. Կասկածյալի, մեղադրյալի կողմից ցանկություն հայտնելու կամ այն դեպքում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, ինչպես նաև սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով պարտադիր համարվող դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել նրանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

3. Քաղաքացիական հայցվորը կամ նրա օրինական ներկայացուցիչը, կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցիչը, ինչպես նաև քաղաքացիական պատասխանողը քրեական դատավարության ընթացքում իրավունք ունեն օգտվել իրենց հրավիրած ներկայացուցիչների իրավաբանական օգնությունից:

4. Քրեական հետապնդման մարմինը տուժողի հարցաքննության ժամանակ իրավունք չունի արգելել նրա կողմից որպես ներկայացուցիչ հրավիրված փաստաբանի մասնակցությունը:

5. Քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին՝ ելնելով նրա գույքային դրությունից:

1. Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է համապատասխան դեպքերում գործին մասնակից դարձնել կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցչին:

4. Կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի և օրինական ներկայացուցչի միջոցով: Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական դատավարությանը չի սահմանափակում կասկածյալի և մեղադրյալի իրավունքները:

5. Կասկածյալին և մեղադրյալին չի կարելի հարկադրել ցուցմունքներ տալ, նյութեր ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնին կամ նրան որևէ աջակցություն ցույց տալ:

Վկայի և Տուժողի պաշտպանության իրավունքը

Քրեական դատավարության ընթացքում վկան իրավունք ունի վարույթն իրականացնող մարմնին ներկայանալ փաստաբանի հետ:

Քրեական դատավարությունը մի փոքր այլ ընթացակարգ է սահմանում տուժողի իրավունքների պաշտպանության որորոտում, քրեական գործի քննության շրջանակներում տուժողի իրավունքները և ազատություններըդատարանում, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնում ներկայացնելիս փաստաբան լինելը պարտադիր հանգամանք չէ, ինչպես մյուս կարգավիճակներում:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը

1. Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ:

2. Անձը, որին քրեական վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է հայտնել կամ տրամադրել հանցանք գործելու մեջ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների մեղավորությունը հիմնավորող տեղեկություններ կամ նյութեր, իրավունք ունի հրաժարվել նման տեղեկություններ հայտնելուց և նյութեր տրամադրելուց:

Արդար դատաքննության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք:

2. Դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը չեն կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե նրանք ուղղակի կամ անուղղակի շահագրգռված են գործի ելքով:

3. Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

4. Կասկածյալի, մեղադրյալի և նրանց պաշտպանի հայտարարություններն իրենց անմեղության, կասկածյալին կամ մեղադրյալին արդարացնող, իրենց պատասխանատվությունը մեղմացնող ապացույցների առկայության մասին, ինչպես նաև քրեական դատավարության ընթացքում օրինականության խախտումների վերաբերյալ բողոքները պետք է մանրակրկիտ ստուգի քրեական վարույթն իրականացնող մարմինը:

Հավասարությունը օրենքի և դատարանի առջև

1. Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև:

2. Իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Քրեական դատավարությունում կասկածյալի և մեղադրյալի իրավունքները և պարտականությունները.

1. Կասկածյալն ունի պաշտպանության իրավունք: Քրեական վարույթն իրականացնող մարմինը կասկածյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնելու պաշտպանության իր իրավունքը:

2. Կասկածյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

1) իմանալ՝ ինչում է կասկածվում, տեղեկացվել կասկածանքի բովանդակությանը, նրան վերագրվող արարքի փաստական կողմին և իրավաբանական որակմանը.

2) ձերբակալվելուց հետո հետաքննության մարմնից, քննիչից կամ դատախազից անմիջապես ստանալ իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում.

3) ձերբակալվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարվելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալ ձերբակալելու կամ խափանման միջոց ընտրելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշման պատճենը, իսկ ձերբակալման արձանագրություն կազմելուց հետո՝ դրա պատճենը.

4) ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարելու պահից ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն.

5) առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցվել իր պաշտպանի հետ՝ առանց դրանց թվի և տևողության սահմանափակման, բացառությամբ սույն օրենսգրքի 211-րդ հոդվածի երկրորդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի.

6) հարցաքննվել պաշտպանի ներկայությամբ.

7) տալ ցուցմունքներ կամ հրաժարվել ցուցմունքներ տալուց.

8) տալ բացատրություններ կամ հրաժարվել բացատրություններ տալուց.

9) արգելանքի վերցնելուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով մերձավոր ազգականներին, իսկ զինծառայող լինելու դեպքում՝ նաև զինվորական մասի հրամանատարությանը, հեռախոսակապի կամ հնարավոր այլ միջոցով տեղյակ պահելու արգելանքի տակ պահելու իր տեղի և հիմքերի մասին:

….

10) ներկայացնել նյութեր քրեական գործին կցելու համար.

11) հայտնել բացարկներ.

12) հարուցել միջնորդություններ.

13) առարկել քրեական հետապնդման մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.

14) իր միջնորդությամբ, հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի թույլտվությամբ անձամբ կամ պաշտպանի միջոցով մասնակցել քննչական և այլ դատավարական գործողություններին կամ հրաժարվել դրանց մասնակցելուց, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ.

15) ծանոթանալ այն քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել կամ ներկա է գտնվել և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու դեպքում պահանջել նշված գործողության արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն.

16) քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով ծանոթանալ փորձաքննությունների և մասնագիտական ստուգումների վերաբերյալ ընդունված որոշումներին, իսկ իր խնդրանքով՝ նաև անվճար ստանալ այդ որոշումների պատճենները.

17) բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները.

18) հետ վերցնել իր կամ իր պաշտպանի ներկայացրած բողոքը.

19) ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունների հետևանքով անօրինական պատճառված վնասի հատուցումը:

3. Կասկածը չհաստատվելու դեպքում կասկածյալը ձեռք է բերում արդարացվածի կարգավիճակ:

4. Կասկածյալի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք: Կասկածյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին:

5. Կասկածյալը պարտավոր է՝

1) ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) լինելով ձերբակալված՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել զննման, ինչպես նաև անձնական խուզարկության.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել բժշկական ստուգման, մատնադրոշմման, լուսանկարվել և հնարավորություն ընձեռել վերցնելու արյան, մարմնի արտաթորությունների նմուշներ.

4) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման և փորձաքննության.

5) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատավորի օրինական կարգադրություններին:

6. Կասկածյալն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ:

7. Անչափահաս կամ անգործունակ կասկածյալի իրավունքները նրա փոխարեն, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը:

1. Մեղադրյալն ունի պաշտպանության իրավունք: Քրեական վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնել պաշտպանության իր իրավունքը:

2. Մեղադրյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

1) իմանալ՝ ինչում է մեղադրվում, որի համար մեղադրանք առաջադրելուց, արգելանքի վերցվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալ որպես մեղադրյալ ներգրավման մասին որոշման պատճենը.

2) արգելանքի վերցվելուց հետո հետաքննության մարմնից, քննիչից կամ դատախազից անմիջապես անվճար ստանալ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում.

3) մեղադրանք առաջադրելու պահից ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն.

4) առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման.

5) հարցաքննվել պաշտպանի ներկայությամբ.

6) տալ ցուցմունքներ կամ հրաժարվել ցուցմունքներ տալուց, առերես հարցաքննվել իր դեմ վկայած անձանց հետ.

7) տալ բացատրություններ կամ հրաժարվել բացատրություններ տալուց.

8) իր միջնորդությամբ, հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի թույլտվությամբ անձամբ կամ պաշտպանի միջոցով մասնակցել քննչական և այլ դատավարական գործողություններին կամ հրաժարվել դրանց մասնակցելուց, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ.

9) արգելանքի վերցնելուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով մերձավոր ազգականներին, իսկ զինծառայող լինելու դեպքում՝ նաև զինվորական մասի հրամանատարությանը, տեղյակ պահել արգելանքի տակ պահելու իր տեղի և հիմքերի մասին:

Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձին արգելանքի վերցնելու դեպքում նրան պահելու տեղի և հիմքերի մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը 24 ժամվա ընթացքում դիվանագիտական ուղիներով հայտնում է արգելանքի վերցված անձի քաղաքացիության, իսկ եթե նա քաղաքացիություն չունի՝ նրա մշտական բնակության պետությանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև շահագրգիռ այլ պետությանը:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով արգելանքի վերցված օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին իրավունք է վերապահված կապվելու համապատասխանորեն իր քաղաքացիության պետության կամ իր մշտական բնակության պետության համապատասխան ներկայացուցչի կամ այդպիսի կապ հաստատելու իրավասություն ունեցող այլ ներկայացուցչի հետ կամ այդ ներկայացուցչի կողմից իրեն այցելության, ապա արգելանքի վերցված անձի կողմից այդ իրավունքի իրականացման խնդրանքի դեպքում պետք է այն բավարարել.

10) քրեական գործին կցելու և հետազոտելու համար ներկայացնել նյութեր.

11) հայտնել բացարկներ.

12) հարուցել միջնորդություններ.

13) հայտարարել իր մեղավորության կամ անմեղության մասին.

14) առարկել քրեական հետապնդման մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.

15) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել կամ ներկա է գտնվել, և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները.

16) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից անվճար պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն.

16[1]) մինչև գործի դատաքննությունն սկսելը հանդես գալ դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությամբ.

17) մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին և գործի նյութերի հետազոտմանը, հանդես գալ ճառերով և ռեպլիկով.

18) դատական քննության ընթացքում հանդես գալ վերջին խոսքով.

19) քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով ծանոթանալ փորձաքննությունների և մասնագիտական ստուգումների նշանակման, իր նկատմամբ խափանման միջոց և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու մասին կայացված որոշումներին, իսկ իր խնդրանքով՝ նաև անվճար ստանալ այդ որոշումների և մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման, հայցադիմումի պատճենը, ինչպես նաև դատավճռի կամ դատարանի այլ վերջնական որոշման պատճենը.

20) բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը.

21) հետ վերցնել իր կամ իր պաշտպանի ներկայացրած բողոքը.

22) առարկություններ ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն տեղեկացված կամ այլ հանգամանքների արդյունքում իրեն հայտնի դարձած դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ.

23) դատարանի նիստում կարծիք հայտնել դատավարության այլ մասնակիցների միջնորդությունների և առաջարկությունների առիթով.

24) բողոքել մյուս կողմի անօրինական գործողությունների դեմ.

25) առարկել նախագահողի գործողությունների դեմ.

26) ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունների հետևանքով անօրինական պատճառված վնասի հատուցումը:

3. Մեղադրյալի կողմից իր իրավունքներից օգտվելը կամ դրանցից օգտվելուց հրաժարվելը չպետք է մեկնաբանվի ի վնաս նրա և նրա համար առաջացնի որևէ անբարենպաստ հետևանք: Մեղադրյալի վրա չի կարող որևէ պատասխանատվություն դրվել իր տված ցուցմունքների և բացատրությունների համար, բացի այն դեպքերից, երբ նա հայտարարել է հանցագործությանն ակնհայտորեն առնչություն չունեցող անձի կողմից հանցանք կատարելու մասին:

4. Մեղադրյալը պարտավոր է՝

1) ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) լինելով կալանավորված՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել անձնական խուզարկության.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել բժշկական ստուգման, մատնադրոշմման, լուսանկարվել և հնարավորություն ընձեռել վերցնելու արյան, մարմնի արտաթորությունների նմուշներ.

4) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման և փորձաքննության.

5) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատավորի օրինական կարգադրություններին.

6) մինչև ընդմիջում հայտարարելն առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

7) դատարանի նիստում պահպանել կարգուկանոն:

5. Մեղադրյալն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ:

6. Անչափահաս կամ անգործունակ մեղադրյալի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը:

5. Իրավունքների պաշտպանության մեխանիզմներ

Մարդու և քաղաքացու իրավունքների ապահովման իր պոզիտիվ պարտականությունը պետությունն իրականացնում է տարբեր պետական և տեղական կառույցների միջոցով:

Իրավունքների ապահովման կարևորագույն պայման է համարվում պետության ներսում համապատասխան մեխանիզմների առկայությունը, որոնց միջոցով կարող են վերականգնվել խախտված իրավունքները: Իրավունքների պաշտպանության մեխանիզմները լինում են ներպետական և միջազգային:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Մարդու իրավունքների և հիմանարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան սահմանում է՝ **յուրաքանչյուր ոք, ում սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:**

Իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմները հետևյալն են:

Ոստիկանություն

Իրավունքների պաշտպանության առաջին միջոց ընդունված է դիտել ՀՀ ոստիկանությանը: Քանզի ոստիկանությունն է ապահովում մարդու անվտանգությունը, հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը, հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, կատարում է քրեական գործով նախնական քննությունը, հասարակական կարգի պահպանությունը և հասարակական

անվտանգությունը: ՀՀ-ում մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրությունները, ինչպես նաև բնագավառում ունեցած փորձը փաստում են այն մասին, որ ոստիկանությունում են ամենից հաճախ ու ամենաշատը խախտվում մարդու իրավունքները:

Դատարաններ

Հայաստանի Հանրապետությունում գործում է եռաստիճան դատական համակարգ՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ, վերաքննիչ դատարան և վճռաբեկ դատարան:

Ընդհանուր իրավասության դատարանները համապատասխանաբար քննում են քաղաքացիական, վարչական և քրեական ուղղությունների բոլոր տիպի գործերը: Ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանները հայցադիմումի հիման վրա քննում են քաղաքացիաիրավական գործերը: Քրեական դատարանները հանցագործությունների շուրջ մեղադրանքի քննություն են իրականացնում: Վարչական դատարանները քննում են այն հայցերը, որոնց մի կողմը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ են կամ դրանց պաշտոնատար անձինք, իսկ մյուս կողմում իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

Վերաքննիչ դատարանները իրենց իրավասության սահմաններում վերանայում են ընդհանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ համապատասխան բողոքի հիման վրա:
Իսկ վճռաբեկ դատարանները քննում են այն գործերը, որոնցով կա օրենքի միատեսակ կիրառության խնդիր:

Մարդու իրավունքների պաշտպան

Իրավունքի պաշտպանության մեխանիզմ է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ է՝ իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ ղեկավարվելով օրինականության, հասարակական համակեցության և սոցիալական արդարության հիմնարար սկզբունքներով: Ելնելով Խոշտանգումների դեմ կոնվենցիայի Կամընտիր արձանագրության դրույթներից՝ Մարդու իրավունքների պաշտպանը հանդիսանում է նաև ազգային կանխարգելման մեխանիզմ և որպես այդպիսին իրավունք ունի անարգել մուտք գործելու ՀՀ բոլոր փակ և կիսափակ հաստատությունները՝ խոշտանգման դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով:

ՀՀ Փաստաբանների պալատ

Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով՝ իրավաբանական խորհրդատվություն, դատական ներկայացուցչություն, քրեական գործերով պաշտպանություն: Սոցիալապես անապահով անձանց իրավունքների պաշտպանության համար ստեղծվել է հանրային պաշտպանի գրասենյակը, որն անվճար իրավաբանական աջակցություն է տրամադրում սոցիալապես անապահով անձանց քրեական և քաղաքացիական (վարչական) գործերով:

Քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինը անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, կամ եթե դա է պահանջում արդարադատության շահը:

5. Հանրային պաշտպանի գրասենյակը, բացառությամբ քրեական գործով կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն տրամադրելու, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքերի, սույն հոդվածով նախատեսված անվճար իրավաբանական օգնությունը տրամադրում է հետևյալ անձանց՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին.

2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին.

3) դատապարտյալներին.

4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին.

5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին.

6) գործազուրկներին.

7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին.

8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց.

9) փախստականներին.

10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածներին.

11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց.

12) հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց.

13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմ է նաև մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որը քննում է մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտման դեպքերով ներկայացված գործերը: Եվրոպական դատարան կարելի է ներկայացնել այն գործերը, որոնցով սպառվել են ներպետական հնարավոր միջոցները և վերջնական դատական ակտի կայացումից հետո 6 ամսվա ընթացքում:

Իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ

Հասարակական կազմակերպությունները ստեղծվում են իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները մեծ ներդրում ունեն մարդու իրավունքների բնագավառում իրավակիրառ պրակտիկայի բարելավման գործընթացքում: Իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններն իրենց գործունեությամբ նպաստում են մարդու իրավունքների և դրանց պաշտպանության վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացմանը, քաղաքացիական վերահսկողություն են իրականացնում իշխանությունների կողմից մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ապահովման նկատմամբ, ինչպես նաև կոնկրետ

գործողություններ են ձեռնարկում առանձին քաղաքացիների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

6. Ձևաթղթեր

- տեղեկատվություն ստանալու հարցման ձև
- հայցադիմումի սահմանված ձևաթուղթ
- հայցադիմումի պատասխանի ձևաթուղթ
- դիմումի ձև
- հանցագործության մասին հաղորդման ձև
- դիմում-բողոքի ձև

_____

_____

_____

Դիմող՝

_____

_____

հեռ. _____

Տեղեկատվություն ստանալու հարցում

ՀՀ Սահմանադրության 27 րդ հոդվածի և ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ *խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ.*

- ✓ _____
- ✓ _____
- ✓ _____
- ✓ _____
- ✓ _____
- ✓ _____
- ✓ _____

Համաձայն ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն

ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Դիմող՝ _____

_____թ.

Հայցադիմումի սահմանված ձևաթուղթ

ՀՀ_____-ին
(նշել դատարանի անվանումը)
հայցվոր՝ _____
(անվանում / անուն, ազգանուն, հայրանուն)
_____-ից

հասցե՝ _____
(նշել հասցեն)
_____
(անձնագիր/սոցիալական քարտի համարը՝ առկայության դեպքում)
_____
(իրավաբանական անձի դեպքում՝ ՀՎՀՀ, պետ. գրանցման համարը)

պատասխանող՝ _____
(անվանում / անուն, ազգանուն)
հասցե՝ _____
(նշել հասցեն)

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ

_____ պահանջի մասին
(նշել հայցի համառոտ պահանջը)

_____

_____

_____

_____

_____:
(տալ վեճի համառոտ նկարագրությունը)

Գտնում եմ, որ_____,
(նշել հայցվորի պահանջները հիմնավորող ապացույցները, հանգամանքները (գումարի

_____:
բռնագանձման պահանջի դեպքում՝ բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը և դրա հաշվարկը))

_____

_____:
(նշել հայցապահանջը (ները) հիմնավորող իրավական նորմը (երը) և դրա (դրանց) համառոտ շարադրանքը)

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ , 87-րդ և 88-րդ հոդվածները՝ դատարանից

Խնդրում եմ

_____:
(նշել պահանջը (ները))

Կից ներկայացնում եմ `

1. _____
2. _____
/…/_____
(նշել կցվող ապացույցները, որոնք հաստատում են հայցապահանջը)

Հայցվոր՝ _____
(ստորագրություն, (պաշտոնը) անուն, ազգանուն)

»__« »_____«200_ թ.

Հայցադիմումի պատասխանի ձևաթուղթ

ՀՀ_____-ին
(նշել դատարանի անվանումը)
պատասխանող՝
_____
(անվանում / անուն, ազգանուն)
_____-ից

հասցե՝ _____
(նշել հասցեն)
հեռ.՝ _____

հայցվոր՝ _____
(անվանում / անուն, ազգանուն)
հասցե՝ _____
(նշել հասցեն)

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

ՀՀ_____-ի վարույթում է գտնվում քաղաքացիական գործն ըստ
(նշել դատարանի անվանումը)
հայցի _____ ընդդեմ _____-ի՝
(նշել հայցվորի անունը / անվանումը) (նշել պատասխանողի անունը / անվանումը)
_____ պահանջի (ների) մասին։
(նշել վեճի առարկան)

_____

_____

(տալ վեճի համառոտ պատմությունը և նկարագրությունը)

Գտնում եմ, որ հայցվորի պահանջը (ները) անհիմն է և ամբողջությամբ (մասնակիորեն) (ընդգծել) ենթակա է մերժման , քանի որ_____
_____

_____՝

(նշել այն հանգամանքները և դրանք հիմնավորող ապացույցները , որոնցով պատասխանողը հիմնավորում է իր առարկությունները հայցի դեմ)

ըստ ՀՀ _____

_____:

(նշել այն իրավական նորմը(երը, և այդ նորմի(երի) համառոտ շարադրանքը(ները), որով(որոնցով) դատարանը , պատասխանողի կարծիքով, պետք է լուծի վեճը)

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածը՝ դատարանին

Խնդրում եմ

Հայցվորի պահանջը ամբողջությամբ
/մասնակիորեն՝ _____

(հայցի մասնակի ընդունման դեպքում

_____մասով, (ընդգծել)

նշել մասնակի մերժման ենթական պահանջի չափը)

մերժել:

Կից ներկայացնում եմ ՝

1. _____
2. _____

/…/_____

(նշել կցվող ապացույցները, եթե այդպիսիք կան , որոնք հիմնավորում են պատասխանողի առարկությունները հայցի դեմ)

Պատասխանող՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

»__« »_____« 200_ թ.

Դիմումի ձև

ՀՀ_____-ին
(նշել դատարանի անվանումը)
հայցվոր՝
_____
(անվանում / անուն, ազգանուն,
հայրանուն)
_____-ից

հասցե՝ _____
(նշել հասցեն)

_____

_____
(անձնագիր/սոցիալական քարտի համարը՝ առկայության դեպքում)

Դ ի մ ո ւ մ

_____
_____
_____
_____
_____
: (տալ վեճի համառոտ նկարագրությունը)

Գտնում եմ,
որ_____,
(նշել հայցվորի պահանջները հիմնավորող ապացույցները, հանգամանքները
_____
_____
:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 191-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատարանը օրենքով նախատեսված դեպքերում քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր:
Աշխատանքային ստաժի տարիների դատական կարգով հաստատումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կենսաթոշակ ստանալու

համար: Պետական կենսաթոշակների մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ կենսաթոշակի չափը հաշվարկվում է կենսաթոշակի հիմնական և ապահովագրական մասերի գումարից: Տվյալ դեպքում իմ ապահովագրական ստաժից բացակայող ------ տարիները ինձ հնարավորություն չեն տալիս ստանալ իմ ամբողջ աշխատանքային ստաժին համապատասխան կենսաթոշակ:

(նշել հայցապահանջը (ները) հիմնավորող իրավական նորմը (երը) և դրա (դրանց) համառոտ
շարադրանքը)

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ , 87-րդ և 88-րդ հոդվածները՝ դատարանից

Խնդրում եմ

_____

_____

:

(նշել պահանջը (ները))

Կից ներկայացնում եմ ՝

1. _____
2. _____

/…/_____

(նշել կցվող ապացույցները, որոնք հաստատում են հայցապահանջը)

Հայցվոր՝ _____

(ստորագրություն, (պաշտոնը) անուն, ազգանուն)

»__« »_____«200_ թ.

ՀՀ Ոստիկանության ----------
պարոն……

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ես՝ …….. (անուն, ազգանուն, հայրանուն), ծնվ. …….(ամիս, ամսաթիվ), անձնագիր…… (սերիա, համար), բնակվող …….հասցեում, հեռ. ……, ներկայացնում եմ հաղորդում հետևյալի մասին.
……
……
……
……
……
……
……. (նկարագրեք այն բոլոր էական հանգամանքները, փաստերը, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի քննության համար, այսինքն՝ երբ, որտեղ, ում կողմից է կատարվել հանցագործությունը, ում նկատմամբ, ինչում է այն դրսևորվել, կան արդյո՞ք ականատեսներ կամ հաղորդումը հիմնավորող առարկաներ և փաստաթղթեր)

Խնդրում եմ օրենքով սահմանված կարգով միջոցներ ձեռնարկել հանցագործությունը բացահայտելու և հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Դիմող (ստորագրություն) (Անուն, ազգանուն)
----------(ամիս, ամսաթիվ)

Դիմում-բողոքի ձև

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքների
դատախազ պարոն……-ին
քաղաքացի……-ից

ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության վարչության քննիչ ---------- *(անուն, հայրանուն, ազգանուն)* որոշման դեմ

Ես՝ …….. (անուն, ազգանուն, հայրանուն), ծնվ. ……..(ամիս, ամսաթիվ), անձնագիր…… (սերիա, համար), բնակվող …….հասցեում, հեռ. …… ս/թ ----------ին հանցագործության մասին հաղորդում եմ ներկայացրել Երևան քաղաքի ոստիկանության վարչություն այն մասին, որ *(նկարագրել հանցագործության փաստական հանգամանքները, այսինքն՝ երբ, որտեղ, ում կողմից է կատարվել հանցագործությունը, ում նկատմամբ, ինչում է այն դրսևորվել, կան արդյո՞ք ականատեսներ կամ հաղորդումը հիմնավորող առարկաներ և փաստաթղթեր)……*
……
……
……
……

Քննիչ ----------ը իր ----------թ-ի որոշմամբ մերժել է քրեական գործի հարուցումը:

Գտնում եմ, որ քննիչի որոշումն անհիմն է, քանի որ առկա են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Մասնավորապես ------(նշել հիմքերը):

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 185 հոդվածով.

<u>Խնդրում եմ</u>

Վերացնել բողոքարկվող որոշումը, հարուցել քրեական գործ:

Դիմող (ստորագրություն) (Անուն, ազգանուն)

----------(ամիս, ամսաթիվ)